ՀԱՂՈՐԴԱԿՑՎՈՒՄ ԵՆՔ ;-Ը

ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿԻ ՄԱՍՆԻԿՆԵՐ

- Ե՞րբ կարող ենք օգտվել զրուցարանից,-Աննան հարցրեց Հելենին՝ հուզված վերիվար ցատկոտելով:

Հելենը Աննային ու Ալեքսին խնամում է, երբ նրանց ծնողները տանը չեն: Նրանք ավարտել են իրենց տնային աշխատանքը և որոշել են միասին նստել ու իրենց հատկացված կես ժամը օգտագործել էլ. փոստի ու զրուցարանի մասին նոր բաներ սովորելու համար: Աննան հատկապես շատ է ուզում զրուցարանով հաղորդակցվել, քանի որ արձակուրդի ընթացքում ընկերացել է Ջենիի անունով մի աղջկա հետ, որը ապրում է Անգլիայում: Վերջինս նրան տվել է իր զրուցարանի հասցեն:

- Կարող եք սկսել հաղորդակցվել զրուցարանում հենց որ ունենաք էլ. փոստի և զրուցարանի հասցեներ, - ժպտալով ասաց Հելենը:

- Ի՞նչ բան է էլեկտրոնային գրանցումը,-հարցրեց Աննան:

Հելենը նրան բացատրեց.

- Համացանցից դուրս՝ իրական աշխարհում, երբ դու բաժանորդագրվում ես ամսագրի կամ ձեռք ես բերում մարզասրահի անդամատոմս, դու լրացնում ես ձևաթուղթ՝ նշելով տեղեկություններ քո մասին: Նույնը պահանջվում է անել էլ. փոստի կամ զրուցարանի ծառայություններից օգտվելու համար: Ընտրում ես ծառայությունը, ասենք, yahoo, hotmail, gmail, msn կամ icq, ապա՝ գրանցվում ու այդպիսով անդամագրվում տվյալ ծառայությանը:

Նշե՛ք, թե հետևյալ տեղեկությունները որքանով են գաղտնի ձեզ համար. ■ *խիստ գաղտնի* ■ *բավականին գաղտնի* ■ *ոչ այնքան գաղտնի*

ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐԸ	■	■	■	ՄԱՁԵՐԻ ԳՈՒՅՆԸ	■	■	■
ԱՆՈՒՆԸ	■	■	■	ԵՐԿԻՐԸ	■	■	■
ԴՊՐՈՑԸ	■	■	■	ՏԱՆ ՀԱՍՑԵՆ	■	■	■
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆՈՒ ԱՆՈՒՆԸ	■	■	■	ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	■	■	■
ԷԼ. ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆ	■	■	■	ՆԿԱՐՆԵՐԸ	■	■	■
ՏԱՐԻՔԸ	■	■	■				

-Այն տեղեկությունները, որ դու տալիս ես քո մասին ստեղծում են քո էլեկտրոնային նկարագիրը՝ անձնական էջը (profi le) -շարունակեց Հելենը:

-Երբ դու օգտվում ես համացանցից, քո անձնական էջը կամ քո մասին նշված տեղեկությունները կարող են հասանելի դառնալ տասնյակ, հարյուրավոր, հազարավոր և անգամ միլիոնավոր մարդկանց:

Տեսնելով Աննայի շվարած հայացքը՝ Հելենը փորձում է նրան բացատրել ևս մի քանի բան:

-Գիտե՞ս արդյոք «Գուշակի՛ր ով է» խաղը, որ մենք ժամանակին խաղում էինք: Երբ մարդու տարիքի, աչքերի գույնի կամ սանրվածքի մասին հարցերի միջոցով փորձում էին պարզել նրա ով լինելը:

-Ուրեմն մարդիկ փորձու՞մ եք պարզել, թե ով եմ ես,- անմեղ ձայնով հարցրեց Աննան:

- Երբեմն այո՛, -պատասպանեց Հելենը:

-Դու կարող ես առանց այդ մասին մտածելու քո մասին չափից շատ տեղեկություններ հայտնել այնպիսի մարդկանց, որոնց անգամ չես էլ ճանաչում: Անգամ եթե տալիս ես միայն քո կեղծանունը, էլ. փոստը, նկարը կամ էլ դպրոցի համարը, դա արդեն անծանոթների համար բավականին շատ տեղեկություն է: Ավելին, քան իրականում պետք է: Անձնական տեղեկությունները նման են փազլ խաղին: Փոքր կտորները իրար միացնելով, նույնիսկ եթե դրանք շատ են տարբերվում միմյանցից՝ անծանոթ մարդիկ, կարող են ստանալ ավելի մեծ և մանրակրկիտ, մանրամասնություններով լի նկար:

- Դա այնքան էլ հաճելի չէ,- հանգիստ ասաց Աննան:

- Ինչպե՞ս կարող ենք դա թույլ չտալ:

- Պարզապես համացանցից օգտվելիս եղի՛ր զգույշ, ինչպես իրական՝ ցանցից դուրս աշխարհում, - պատասխանում է Հելենը: Լրագրային կամ թերթի հոդվածում դու չես հրապարակի քո անունը, տարիքը, արձակուրդի ժամանակ արված նկարները և հեռախոսահամարը: Ոչ էլ նման տեղեկությունը կհրապարակես հայտարարության մեջ կամ գովազդային վահանակի վրա, որ բոլորը տեսնեն, այնպես չէ՞:

- Գիտեմ,-ասաց Աննան,-կարող եմ հորինել կեղծ տեղեկություններ իմ մասին: Կարող եմ ձևացնել, որ ուրիշ մարդ եմ… Ի՞նչ կասես դրա մասին:

-Լավէ,որմտածումես,-ասացՀելենը,-բայցքոանձնականտվյալներիպաշտպանությունըչինշանակում կեղծ տեղեկություններ տարածել քո ինքնության մասին: Դու այնուամենայնիվ պատասխանատու ես համացանցում քո կատարած յուրաքանչյուր գործողության ու արտահայտության համար: